

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՇԱՀԵՐԻ ՀԱՎԱՍՏԱՐԱԿՇՈՄԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ԻՐԱՅՈՒՄԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ

Հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման հիմնախնդիրը մշտապես արդիական է քրեադատավարական կարգավորումների համատեքստում: Իհարկե չպետք է մոռանալ, որ այս հարցում սկզբունքային և ելակետային նշանակություն ունի ՀՀ Սահմանադրությունը, քանի որ այն քրեադատավարական օրենսդրության մշակման և դրա շրջանակում քրեական դատավարության մասնակիցների օրինական շահերի ու իրավունքների, դրանց իրացմանը, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից կամայականությունների կանխմանն ուղղված նորմերի ամրագրման իրավական հիմքն է:

Վերջին շրջանում քրեական դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պատշապանությունն առանձնապես արդիական է դարձել՝ պայմանավորված 2015 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխություններով, ինչպես նաև 2018 թվականին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած իրադարձություններով: Բնականաբար, դրանք իրենց արտացոլումն են գտել գիտական հանրության շրջանում տարբեր քննարկումներում: Եվ այս առումով հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման խնդրի զարգացման պատմությունը կարելի է բաժանել երկու փուլի, որոնք ժամանակագրական առումով համընկնում են սահմանադրական զարգացման փուլերին: Առաջին փուլում՝ սկսած 1990-ական թվականներից, հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության խնդիրը որոշակիորեն հանգուցալուծվեց 1995 թվականի Սահմանադրության ընդունմամբ, ապա 2005 թվականին՝ դրա էվոլյուցիոն կատարելագործմամբ, երբ ընդունվեց Սահմանադրության նոր խմբագրությունը, որում զգալիորեն ուժեղացվեցին դատավարության մասնակիցների սահմանադրական իրավունքները և դրանց երաշխիքները:

Թե՛ 1995 թվականի և թե՛ 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունը նախատեսում էր անձի իրավունքների և ազատությունների բավական մեծ շրջանակ, պետության և անհատի փոխհարաբերությունների հիմնարար սկզբունքները այնպիսի կարևորագույն ոլորտում, ինչպիսին քրեական դատավարությունն է, որտեղ առավելագույնս սահմանափակվում են անձի իրավունքները և ազատությունները:

րը, կիրառվում են դատավարական հարկադրանքի միջոցներ:

Մեզ հետաքրքրող հարցի առնչությամբ հիմնարար նշանակություն ունեին Սահմանադրության և օրենքների հիման վրա միջազգային իրավունքի սկզբունքներին համապատասխան մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ապահովելու՝ պետության պարտականություն սահմանելու, մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեք ճանաչելու, մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները օրենքի հիման վրա և բացառապես այն դեպքում սահմանափակելու մասին դրույթները, երբ դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հանրային կարգի, առողջության և բարոյականության, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:

Բացի վերոշարադրյալ դրույթներից, 1995 և 2005 թվականների խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունը նախատեսում էր բազմաթիվ այլ դրույթներ ևս, որոնք իրացվել են քրեական դատավարության մասնակիցների իրավունքների և ազատությունների վերաբերյալ քրեադատավարական կարգավորումներում: Դրանց շարքին կարելի է դասել անձի իրավունքների ու ազատությունների պետական պաշտպանության, անձի մասնավոր և ընտանեկան կյանքի, հաղորդակցության գաղտնիության իրավունքի սահմանափակման նկատմամբ դատական վերահսկողության, օրենքի խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալները որպես ապացույց օգտագործելու անթույլատրելիության վերաբերյալ սահմանադրական դրույթները և այլն:

Ինչ վերաբերում է 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով Սահմանադրության մեջ քննարկվող խնդրի առնչությամբ տեղ գտած կարգավորումներին, ապա հիմնական օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:*

2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

Մինևույն ժամանակ, Սահմանադրության 2-րդ գլուխն ամրագրում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները՝ նախատեսելով նաև օրենքով սահմանված դեպքերում և կարգով դրանց որոշակիորեն սահմանափակման հնարավորություն (օրինակ՝ անձնական ազատությունը, բնակարանի անձեռնմխելիությունը, հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը և այլն): Եվ այդ նույն՝ 2-րդ գլխում առաջին անգամ իբրև սահմանադրական

արժեք ամրագրվեց **համաչափության սկզբունքը**, համաձայն որի՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցների պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցների պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությամբ:

Նշված սկզբունքի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն իրավունքի տարբեր ճյուղերում հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման սահմանադրական չափանիշն է, որը պետք է հիմք ծառայի առանձին իրավական ինստիտուտների օրենսդրական կարգավորումների համար այնքանով, որքանով դրանք առնչվում են մասնավոր իրավունքների հնարավոր սահմանափակումներին:

Ընդ որում, Սահմանադրությունը ոչ միայն սահմանում է մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման ընդհանուր չափորոշիչը, այլև առանձին կարգավորումներում պարունակում է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման օրինակներ: Մասնավորապես, արդար դատաքննության իրավունքը սահմանող՝ Սահմանադրության 63-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է: Վերոհիշյալ նորմի վերլուծությունից բխում է, որ, ի տարբերություն նախորդ սահմանադրական կարգավորման, երբ առհասարակ արգելվում էր օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցի օգտագործումը (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով Սահմանադրության 22-րդ հոդված), քննարկվող սահմանադրական արգելքը չի տարածվում օրենքի ոչ էական խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալները՝ որպես ապացույց օտագործելու թույլատրելիության վրա: Կամ՝ Սահմանադրության մեջ հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման օրինակ են կարգավորումներն այն մասին, որ մասնավոր և ընտանեկան կյանքի, բնակարանի անձեռնմխելիության իրավունքը, հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով (Սահմանադրության 31-33-րդ հոդվածներ): Ընդ որում, տարբեր իրավունքների սահմանափակման նման հավասարակշռված հնարավորություն նախատեսող նորմերի շրջանակը վերը թվարկված օրինակներով չի սահմանափակվում: Պարզապես կոնկրետ դեպքերի վկայակոչումը պայմանավորված է քրեադատավարական համապատասխան կարգավորումների տեսանկյունից դրանց ելակետային նշանակությամբ, քանի

որ քրեական դատավարությունում առկա օրենսդրական սահմանափակումներն առավելապես վերաբերում են հենց նշված իրավունքներին:

Համաչափության սկզբունքի ամրագրումը ներպետական օրենսդրության մեջ և գործնականում դրա կիրառությունը սահմանադրական և ընդհանուր իրավասության դատարանների կողմից՝ իբրև պետության կողմից մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը երաշխավորելու ընթացակարգ, բնորոշ է և՛ ընդհանուր, և՛ մայրցամաքային իրավունքի երկրներին, ինչպիսիք են՝ ԱՄՆ-ն, Արգենտինան, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Իսպանիան, Իտալիան, Ֆրանսիան, Բելգիան, Դանիան, Լյուքսեմբուրգը, Հոլանդիան, Պորտուգալիան, Շվեյցարիան և այլն: Այն կիրառվում է նաև վերպետական դատական այնպիսի ատյանների պրակտիկայում, ինչպիսիք են՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանը, ԵՄ արդարադատության դատարանը¹:

Այս սկզբունքի կիրառության միջազգային բնույթն ընդգծելու համար արտասահմանյան տեսության մեջ բավական հետաքրքիր դիտարկում է արվում այն մասին, որ *նոլջամտության չափանիշը (համաչափության պահանջը)*, անկախ դրա կոնկրետ դրսևորումից, նույն ԱՄՆ գերագույն դատարանի կողմից մշակված «նոլջամիտ հիմքի» կամ Շվեյցարիայի Դաշնային Գերագույն դատարանի կողմից առաջ քաշված «նոլջամիտ հիմնավորման» կամ տեսության մեջ ձևավորված և Գերմանիայի Սահմանադրական դատարանի կողմից օգտագործվող «ոչ կամայականության» կամ Իտալիայի Սահմանադրական դատարանի ոռոշումներով իրավունքի ընդհանուր սկզբունք դարձած «նոլջամտության» (*ragionevolezza*) կանոնն է²:

¹ Տե՛ս JÜRGEN SCHWARZE, EUROPEAN ADMINISTRATIVE LAW 680-702 (1992); NICHOLAS EMILIOU, THE PRINCIPLE OF PROPORTIONALITY IN EUROPEAN LAW (1996); Michael Akehurst, The Application of General Principles of Law by the Court of Justice of the European Communities, 1981 BRIT. Y.B. INT'L L. 29, 38-51 (U.K.); Sophie Boyron, Proportionality in English Administrative Law: A Faulty Translation?, 12 OXFORD J. LEGAL STUD. 237 (1992) (U.K.); Javier Barnes, Introducción al principio de proporcionalidad en el derecho comparado y comunitario, 135 REVISTA DE ADMINISTRACIÓN PÚBLICA 495, 495-99 (1994) (Spain); George A. Bermann, The Principle of Proportionality, 26 AM. J. COMP. L. (SUPP.) 415 (1978); Guy Braibant, Le principe de la proportionnalité, in MÉLANGES OFFERTS À MARCEL WALINE 297 (1974); Jean-Marie Auby, Le contrôle juridictionnel du degré de gravité d'une sanction disciplinaire, REVUE DU DROIT PUBLIC ET DE LA SCIENCE POLITIQUE EN FRANCE ET À L'ÉTRANGER, janvier-fevrier 1979, էջեր 227-238 (Fr.); JUAN FRANCISCO LINARES, RAZONABILIDAD DE LAS LEYES (2d ed. 1989); JUAN CARLOS GAVARA DE CARA, DERECHOS FUNDAMENTALES Y DESARROLLO LEGISLATIVO 293-326 (1994); ROBERT ALEXANDER, TEORÍA DE LOS DERECHOS FUNDAMENTALES 111-112 (2d ed. 2001); WESTEL WOODBURY WILLOUGHBY, THE CONSTITUTIONAL LAW OF THE UNITED STATES (2d ed. 1929); Anna N. Georgiadou, Le principe de la proportionnalité dans le cadre de la Jurisprudence de la Cour de Justice de la Communauté Européenne, 81 ARCHIV FÜR RECHTS- UND SOZIALPHILOSOPHIE 532 (1995) (Ger.); and Javier Jiménez Campo, La igualdad jurídica como límite al legislador, 1983 REVISTA ESPAÑOLA DE DERECHO CONSTITUCIONAL, № 9, էջ 71, 72 (Spain), մնջքերումն ըստ՝ Juan Cianciardo, The Principle of Proportionality: The challenges of human rights, January 2010, հասանելի է <https://www.researchgate.net/publication/216827143>

² Տե՛ս Jiménez Campo, նշվ. աշխ., էջ 73, Jürgen Schwarze, նշվ. աշխ., էջ 677:

Համաչափության սկզբունքը ենթադրում է, որ բոլոր այն իրավական կարգադրագրերը, որոնք ազդում են մարդու իրավունքների վրա, պետք է լինեն համաչափ և ողջամիտ: Համաչափության պահանջը կազմված է երեք ենթապահանջներից կամ չափանիշներից՝ համարժեքություն, անհրաժեշտություն և համաչափություն՝ նեղ իմաստով (*stricto sensu*):

Առաջին՝ համարժեքության ենթապահանջը սահմանում է, որ մարդու իրավունքներին առնչվող նորմերը պետք է համահունչ լինեն օրենսդրի կողմից նախանշված նպատակներին: Այլ կերպ՝ եթե իրավակիրառը բացահայտել է օրենսդրի նախանշած նպատակը և դրան հասնելու միջոցները, ապա պետք է պարզի, թե արդյոք դրանք կարող են ապահովել այդ նպատակի իրացումը:

Երկրորդ սկզբունքի միջոցով իրավակիրառը գնահատում է, թե արդյոք ցանկալի նպատակին հասնելու համարժեք արդյունավետ միջոցներից օրենսդիրն ընտրել է մարդու իրավունքները նվազագույնս սահմանափակողը:

Իրավական նորմի՝ այս երկու սկզբունքներին համապատասխանությունը գնահատելուց հետո իրավակիրառը պետք է գնահատի՝ արդյո՞ք այն ողջամիտ է նեղ իմաստով՝ *stricto sensu*, թե՞ ոչ, ինչը ենթադրում է օրենքով պայմանավորված առավելությունների և թերությունների հավասարակշռության վերլուծություն³: Համաչափության սկզբունքը (*stricto sensu*) ենթադրում է, որ անհրաժեշտ նպատակի կամ վերջնարդյունքի իրացման միջոցը կամ գործիքը պետք է ողջամիտ լինի⁴: Իրավակիրառը պետք է գնահատի, թե արդյոք այս հավասարակշռությունը համաչափ է (ողջամիտ): Չնայած տեսության մեջ և գործնականում համաչափության էության բացահայտման հարցում որոշակի միասնականությանը՝ այդուհանդերձ մոտեցումները կարող են տարբերվել այն հարցում, թե որ հարաբերություններն են ողջամիտ: Գերակշռող դիրքորոշման համաձայն՝ դատարանները պետք է գնահատեն կիրառման ենթակա միջոցի առավելություններն ու թերությունները: Այս մոտեցման այլընտրանքային բնորոշումը ֆրանսիական իրավունքում հետևյալն է՝ «ծախսերի և օգուտների հավասարակշռում»⁵: Իսպանիայի Սահմանադրական դատարանը ևս նմանատիպ մոտեցում է զարգացրել⁶: Այսպես, օրինակ, թիվ 66/1995 գործով Սահմանադրական դատարանը նշել է, որ իրավունքի սահմանափակումը համա-

³ Տե՛ս Juan Cianciardo, նշվ. աշխ., էջ 179-180:

⁴ Տե՛ս Gavara de Cara, նշվ. աշխ., էջ 308:

⁵ Cf. Jeanne Lemasurier, *Expropriation: "Bilan-cout-avantages" et necessite publique*, LA REVUE ADMINISTRATIVE, septembre-octobre 1979, էջ 502 (Fr.), մեջբերումն ըստ Juan Cianciardo, նշվ. աշխ., Nicholas Emiliou, նշվ. աշխ., էջ 67-114, 92-95; Jean-Marie Auby, նշվ. աշխ., Guy Braibant, նշվ. աշխ.:

⁶ Տե՛ս MANUEL MEDINA GUERRERO, LA VINCULACIÓN NEGATIVA DEL LEGISLADOR A LOS DERECHOS FUNDAMENTALES 132, 134 (1996) (Spain), մեջբերումն ըստ Juan Cianciardo, նշվ. աշխ.:

չափ է *stricto sensu*, եթե այն հավասարակշռված է, քանի որ դրանից օգուտն ընդհանուր շահի համար ավելի մեծ է, քան վնասը հակասության մեջ գտնվող այլ բարիքների կամ արժեքներին⁷:

Միջազգային-իրավական մի շարք փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք, ամրագրելով մարդու հիմնարար իրավունքները, այդուհանդերձ բացարձակ և սահմանափակված ոչ ենթակա դիտարկում են դրանցից ոչ բոլորը: Ընդ որում, առանձին դեպքերում սահմանվում է կոնկրետ փաստաթղթով նախատեսված իրավունքների նկատմամբ կիրառելի ընդհանուր սահմանափակում, որոշ դեպքերում առանձին իրավունքների համար կարող են նախատեսված լինել սահմանափակված կոնկրետ պայմաններ:

Այսպես, օրինակ, համաչափության թեստը կիրառվում է Եվրոպական կոնվենցիայով նախատեսված՝ համապատասխան իրավունքին միջամտության՝ «ժողովրդավարական հասարակության մեջ անհրաժեշտ լինելու» պայմանի մեկնաբանության համատեքստում Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում: Եվրոպական դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ կիրառվող միջոցը պետք է համահունչ լինի հետապնդվող իրավաչափ նպատակներից որևէ մեկին, որի իրացման համար թույլատրվում է իրավունքի սահմանափակումը: Դատարանի հետագա պահանջն այն է, որ համապատասխան միջոցը պետք է համապատասխանի գերակա սոցիալական շահին:

Պարզելու համար, թե արդյոք այս կամ այն իրավունքին միջամտություն նախատեսող միջոցը համահունչ է հետապնդվող իրավաչափ նպատակին, Եվրոպական դատարանը հաշվի է առնում մի շարք գործոններ: Մասնավորապես, Եվրոպական դատարանը գնահատում է, թե արդյոք կիրառվող միջոցն արդյունավետ է կոնկրետ նպատակին հասնելու համար, արդյոք առկա են նույն նպատակի նվաճման նվազ խիստ միջոցներ, և թե արդյոք իրավունքի սահմանափակումն արդարացված է հանրային շահով:

Դրանք ըստ էության նույն համարժեքության, անհրաժեշտության և նեղ իմաստով համաչափության չափանիշներն են:

Իրավաչափ նպատակի առկայության և դրա հետ համաչափության մեջ իրավունքի սահմանափակումը գնահատելու գաղափարն առկա է նաև այլ երկրների ներպետական օրենսդրության մեջ և դատական պրակտիկայում:

Այսպես, օրինակ, կանադական դատարանները, մեկնաբանելով Մարդու իրավունքների և ազատությունների կանադական խարտիայի 1-ին բաժնում ամրագրված այդ իրավունքների և ազատությունների

⁷ St' u S.T.C., May 8, 1995 (S.T.C., № 66/1995) (Spain), մեջբերումն ըստ՝ Juan Cianciardo, նշվ. աշխ.:

սահմանափակման հնարավորություն նախատեսող այն դրույթը, որ նման ողջամիտ սահմանափակումներ կարող են նախատեսված լինել օրենքով, եթե դրանք կարող են ակնհայտորեն արդարացվել անկախ ժողովրդավարական հասարակությունում, իրավական դիրքորոշում են արտահայտել, որ նշված թեստն անցնելու համար կոնկրետ սահմանափակումը պետք է համապատասխանի երկու չափանիշի՝ օբյեկտիվ, այսինքն՝ պետք է բավարար կարևորություն ունենա՝ շրջանցելու սահմանադրորեն երաշխավորված իրավունքը կամ ազատությունը, և երկրորդ՝ ընտրված միջոցները պետք է լինեն ողջամիտ և ակնհայտորեն արդարացված: Այս վերջին պահանջը համաչափության թեստի դրսևորում է: Մասնավորապես, նախատեսված միջոցները պետք է համապատասխանեն ընտրված նպատակին, հնարավորինս նվազ սահմանափակեն կոնկրետ իրավունքը և ազատությունը, ինչպես նաև պետք է ապահովվի համաչափությունը այդ միջոցների կիրառման արդյունքների և «բավականաչափ կարևոր» գնահատված նպատակների միջև⁸:

Ինչ վերաբերում է սահմանադրական այս կարգավորումների համատեքստում հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման գաղափարախոսության իրացմանը ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում (այսուհետ՝ նաև Նախագիծ), ապա արժանահիշատակ է, որ նման հավասարակշռության ապահովման անհրաժեշտությունը դիտարկվել է քրեադատավարական նպատակների շարքում: Այսպես, Նախագծի 2-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգրքի նպատակն անձի իրավունքների և ազատությունների երաշխավորման վրա հիմնված՝ ենթադրյալ հանցանքների վերաբերյալ վարույթի իրականացման արդյունավետ կարգի սահմանում է: Նշված նորմի վերլուծությունը ցույց է տալիս, որ Նախագիծը սկզբունքի մակարդակով ամրագրում է մասնավոր (քրեական գործով վարույթի ընթացքում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանություն) և հանրային (ենթադրյալ հանցանքների վերաբերյալ վարույթի իրականացման արդյունավետ կարգի սահմանում) շահերի փոխկապակցվածությունը:

Հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանության գաղափարն ամրագրված է նաև հանրայնության սկզբունքի օրենսդրական կարգավորման շրջանակում (Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին մաս): Նույն սկզբունքի շրջանակում սահմանվել է, որ անձի իրավունքների կամ ազատությունների սահմանափակումը պետք է համաչափ լինի հակակշիռ հանրային շահերի պաշտպանության նպատակին (Նախագծի 15-րդ հոդվածի 4-րդ մաս):

⁸ St' u Denise Meyerson, Why courts should not balance rights against the public interest, էջ 867-868, հասանելի է՝ https://law.unimelb.edu.au/__data/assets/pdf_file/0006/1707801/31_3_6.pdf

Այս համատեքստում Նախագծում կարևոր նորամուծություն պետք է համարել նաև ոչ իրավաչափ վարքագծի արգելքի սկզբունքը, համաձայն որի՝ վարույթի մասնավոր մասնակիցները և վարույթին օժանդակող անձինք պետք է իրենց իրավունքներից օգտվեն և իրենց պարտականությունները կատարեն բարեխղճորեն: Արգելվում է իրավունքների չարաշահումը, որը վնաս է հասցնում այլ անձանց կամ արդարադատության շահերին (Նախագծի 29-րդ հոդվածի 1-2-րդ մասեր): Քանի որ հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման գաղափարը ամրագրված է իբրև քրեադատավարական օրենսդրության նպատակ և սկզբունք, այն իրացվել է քրեադատավարական առանձին ինստիտուտների մանրամասն կարգավորումներում:

Այսպիսով, Նախագիծը հանրային և մասնավոր շահի հավասարակշռման գաղափարը դիտարկում է երկու տեսանկյունից: Մի կողմից՝ ցանկացած քրեադատավարական ընթացակարգ պետք է կարգավորվի այն հաշվով, որ երաշխավորվի նշված շահերի հավասարակշռումը, մյուս կողմից՝ այս գաղափարը պետք է արտացոլվի կոնկրետ իրավունքի համաչափ սահմանափակման մեջ: Իհարկե, ցանկացած քրեադատավարական ընթացակարգ ևս վերջին հաշվով կապված է դատավարական տարբեր իրավունքների հետ, և հանրային շահի պաշտպանությունը, բնականաբար, հանգեցնելու է այդ իրավունքների իրացման որոշակի սահմաններ նախատեսելուն: Պարզապես առաջին դեպքում թե՛ օրենսդրի և թե՛ իրավակիրառի համար խնդիրն ավելի է բարդանում այն պատճառով, որ օրենսդիրը քրեադատավարական հարաբերությունները պետք է կարգավորի, իսկ իրավակիրառը գործնականում դրանք մեկնաբանի և կիրառի՝ մտքում ունենալով հավասարակշռման ենթակա հանրային և մասնավոր շահերի չափազանց լայն շրջանակ: Այսպես, իբրև հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման օրինակ Նախագծում սահմանվել են օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ձեռք բերված տվյալների՝ որպես սպացույց օգտագործելու թույլատարելիության վերաբերյալ նոր կարգավորումներ: Նախագծի 96-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական վարույթի շրջանակներից դուրս իրականացված օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում դատարանի թույլտվությամբ ստացված տեսագրությունները, տեսաձայնագրությունները, ձայնագրությունները և այլ օբյեկտիվ փաստաթղթերը կարող են ճանաչվել արտավարույթային փաստաթուղթ և կցվել վարույթի նյութերին միայն այն դեպքում, երբ համապատասխան միջոցառումն իրականացվել է ենթադրյալ հանցագործությունը կանխելու, խափանելու կամ ենթադրյալ հանցանք կատարած անձին հանցանքի կատարման պահին կամ դրանից անմիջապես հետո բացահայտելու նպատակով: Նույն օրենսգրքի 97-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ նշված արտավարույթային փաստաթղթերը չեն կարող օգտագործվել ոչ մեծ

կամ միջին ծանրության հանցանքով մեղադրանքը հիմնավորելու համար: Այդ արտավարության փաստաթղթերը կարող են օգտագործվել միայն այն դեպքում, երբ դրանք ստացվել են քրեական վարույթ նախաձեռնելուց առավելագույնը չորս ամիս առաջ՝ ծանր հանցագործության մեղադրանքը հիմնավորելու համար, կամ ութ ամիս առաջ՝ առանձնապես ծանր հանցագործության մեղադրանքը հիմնավորելու համար: Եվ միայն նույն նորմով նախատեսված կոնկրետ հանցանքների վերաբերյալ է (օրինակ՝ ծանրացնող հանգամանքներով սպանություն), որ արտավարության փաստաթղթերի օգտագործման ժամկետային սահմանափակում չի կիրառվում:

Այս կարգավորումները ոչ թե կոնկրետ իրավունքի համաչափ սահմանափակման, այլ հանրային և մասնավոր շահի հավասարակշռված կարգավորման հիման վրա օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ձեռք բերված տվյալների՝ որպես ապացույց օգտագործելու թույլատրելիության դատավարական լուծումներ են, որոնք, իհարկե, արդյունքում կապված են նաև իրավունքների որոշակի սահմանափակումների հետ: Նշված կարգավորմամբ՝ Նախագիծը, հաշվի առնելով մի կողմից՝ հանցավորության դեմ պայքարի հանրային շահի տեսանկյունից կոնկրետ տվյալները որպես ապացույց օգտագործելու կարևորությունը, մյուս կողմից՝ վարույթից դուրս իրականացված համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման ընթացքում անձի բազմաթիվ իրավունքների սահմանափակման հնարավորությունը, փորձել է տալ հավասարակշռված լուծում: Վերջինս արտահայտվում այն բանով, որ չի բացառվել նշված տվյալների օգտագործման հնարավորությունը, այդուհանդերձ դա նախատեսվել է միայն ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների վերաբերյալ գործերով, ընդ որում՝ որոշակի վաղեմության ժամկետով:

Նախագծի էական նորամուծություններից պետք է համարել վերաքննության և վճռաբեկության սահմանների նորովի օրենսդրական կարգավորումը: Մի կողմից՝ վերաքննիչ (վճռաբեկ) դատարանը կաշկանդված է բողոքի հիմքերով և հիմնավորումներով, մյուս կողմից՝ Նախագիծը հնարավոր է համարում օրենքով նախատեսված նյութական և դատավարական հիմքերի առկայության դեպքում դուրս գալ բողոքի սահմաններից (Նախագծի 359-րդ հոդվածի 2-րդ մաս): Ընդ որում, Նախագծով սահմանված համապատասխան հիմքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ բողոքի սահմաններից դուրս գալը հնարավոր է միայն դատական ակտի անվերապահ բեկանմանը հանգեցնող խախտումների առկայության պարագայում (օրինակ՝ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների առկայությունը, արարքին տրված սխալ իրավական գնահատականը, դատարանի կողմից ոչ օրինական կազմով դատական ակտի կայացումը, պաշտպանի բացակա-

յութունը՝ վերջինիս պարտադիր մասնակցության դեպքում, և այլն): Այս դեպքում ևս հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության գաղափարն արտահայտվել է այն բանով, որ Նախագիծը սահմանել է բողոքի սահմաններից հոգուտ անձի դուրս գալու հնարավորություն, սակայն բացառապես սահմանափակ հիմքերի առկայության պարագայում: Նման կարգավորումների շրջանակը բնականաբար չի սահմանափակվում վերը նշված օրինակներով, պարզապես դրանց առանձնացումը նպատակ ունի ցույց տալու, որ Նախագիծը ոչ միայն հռչակում է, այլ նաև կոնկրետ կարգավորումներում հետևողականորեն իրացնում է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման խնդիրը:

Ինչ վերաբերում է կոնկրետ իրավունքի սահմանափակման՝ Նախագծի կարգավորումներին, ապա, օրինակ, ապացուցողական գործողությունների կատարման դատական երաշխիքներն ամրագրող՝ 38-րդ գլխում տեղ գտած 292-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ քննիչի միջնորդությունը պետք է պարունակի այն փաստարկները, որոնք հիմնավորում են անձի սահմանադրական իրավունքի սահմանափակման անհրաժեշտությունը և համաչափությունը:

Տեսության մեջ քննարկվել է այն հարցը, թե նեղ իմաստով համաչափության տեսանկյունից ինչպես պետք է դատարանը ընտրություն կատարի իրավունքների և հանրային շահի միջև, այլ կերպ՝ որոշի, թե արդյոք իրավունքի սուբյեկտի վրա դրված բեռն արդարացված է հանրության ձեռքբերումներով: Համարժեքության և անհրաժեշտության չափանիշները կոչված են բացառելու կառավարության կողմից անձի իրավունքների սահմանափակման այնպիսի միջոցների ընտրությունը, որոնք համահունչ կամ անհրաժեշտ չեն հանրային կառավարման նպատակներին հասնելու համար: Փաստելով, որ այս կամ այն իրավունքը սահմանափակող միջոցը ոչ արդյունավետ է կամ ոչ անհրաժեշտ դատարանը ոչ թե հանրային շահի հետ համեմատությամբ նախապատվությունը կտա իրավունքի պաշտպանությանը, այլ կչեզոքացնի հանրային շահի և իրավունքի միջև հակասությունը՝ արձանագրելով, որ հնարավոր է և՛ պաշտպանել իրավունքը, և՛ հասնել կառավարման նպատակներին⁹: Եվ հակառակը, եթե դատարանը գտնում է, որ իրավունքը սահմանափակող ընտրված միջոցն արդյունավետ է կառավարման նպատակներին հասնելու տեսանկյունից, և որ առկա չէ այդ նպատակներին հասնելու նվազ խիստ միջոց, ապա պետք է ընտրություն կատարի իրավունքի և հանրային շահի միջև: Եվ հենց այդ ընտրությունն է, որ կառավարվում է համաչափության թեստով՝ նեղ իմաստով: Եթե համարժեքության և անհրաժեշտության չափանիշները

⁹ St' u Stephen Gardbaum, 'Limiting Constitutional Rights' (2007) 54 UCLA Law Review 825-6,849, մեջբերումն ըստ՝ Denise Meyerson, նշվ. աշխ.:

կոչված են պատասխանելու այն հարցին, թե արդյոք այս կամ այն միջոցը համահունչ է կառավարման նպատակներին, և թե արդյոք առկա չեն դրանց հասնելու նվազ խիստ միջոցներ, ապա համաչափության թեստը պետք է պատասխանի այն հարցին, թե արդյոք հանրության ձեռքբերումներն արդարացնում են միջամտությունը իրավունքին¹⁰:

Քննարկելով հանրային շահի և մարդու իրավունքների հավասարակշռման խնդիրը ամերիկյան և եվրոպական տեսության մեջ՝ հեղինակները նշված խնդրի երկու հիմնական մոդել կամ մոտեցում են առանձնացնում՝ զուտ հավասարակշռման (balancing model) և վերազնահատման (reweighting approach)¹¹:

Զուտ հավասարակշռման մոդելի էությունը հանգում է մրցակցող շահերը բացահայտելուն, գնահատելուն և համեմատելուն¹²: Այսպես, տեսության մեջ այս մոդելը պաշտպանություն է գտել ԱՄՆ օրինակով՝ փաստելով, որ ԱՄՆ Սահմանադրությունը չի նախատեսում դրանով սահմանված իրավունքների որևէ սահմանափակում, սակայն կառավարման նպատակները կարող են գերակայել սահմանադրական իրավունքների նկատմամբ, և կառավարությունը, օրինակ, կարող է կարգավորել անգամ քաղաքական ճառը՝ պայմանավորված գերակա հանրային շահով, կամ սահմանել ռասսայական դասակարգումներ՝ ելնելով խիստ անհրաժեշտությունից: Եվ դրա հիմնավորումն այն է, որ թե՛ իշխանական լիազորությունները և թե՛ մարդու իրավունքները ծառայում են որոշակի շահերի, որոնք պետք է դրվեն կշեռքի նժարներին¹³:

Եվրոպական տեսության մեջ մարդու իրավունքները և խմբային շահերը դիտարկվում են իբրև սկզբունքներ, որոնցից յուրաքանչյուրը պահանջում է, որ դրանով պաշտպանվող շահերն առավելագույնս իրացվեն՝ ելնելով որոշակի իրավական և փաստական հանգամանքներից: Երբ նշված սկզբունքները մտնում են հակասության մեջ, դրանցից որևէ մեկը կարող է բավարարվել՝ ի հաշիվ մյուսի, ինչը ենթադրում է նշված մրցակցող շահերը հավասարակշռելու, դրանցից յուրաքանչյուրի կշիռը որոշելու անհրաժեշտություն, որը պահանջում է համեմատել իրավունքի միջամտության աստիճանը և ինտենսիվությունը մրցակցող շահը բավարարելու կարևորության հետ. որքան խիստ է սահմանափակումը, այնքան ծանրակշիռ պետք է լինի նման սահմանափակման անհրաժեշտությունը¹⁴: Կամ մեկ այլ բնորոշման համաձայն, որը հիմնվում է առաջնային պատճառների տեսության վրա, շահերի պարզ

¹⁰ Sté u Robert Alexy, *A Theory of Constitutional Rights* (Julian Rivers trans, 2002 ed) 397–9 [trans of: *Theorie der Grundrechte*], մեջբերումն ըստ՝ Denise Meyerson, նշվ. աշխ.:

¹¹ Sté u Denise Meyerson, նշվ. աշխ.:

¹² Sté u Alexander Aleinikoff, ‘Constitutional Law in the Age of Balancing’ (1987) 96 *Yale Law Journal* 943, մեջբերումն ըստ՝ Denise Meyerson, նշվ. աշխ.:

¹³ Sté u Richard H Fallon Jr, ‘Individual Rights and the Powers of Government’ (1993) 27 *Georgia Law Review* 37, 343, 360, 362, Stephen Gardbaum նշվ. աշխ., 800:

¹⁴ Sté u Robert Alexy, նշվ. աշխ., 31, 47–8, 50–1, 65, 47, 67, 105, 102:

հավասարակշռման մոտեցումը ենթադրում է բոլոր հանգամանքների հաշվառմամբ այս կամ այն վարքագծի ընտրության պատճառների գնահատում և առավել ծանրակշիռ պատճառ ունեցող վարքագծի նախապատվություն¹⁵:

Տեսության մեջ, ընդհանրացնելով գուտ հավասարակշռման մոդելի հիմնական բնութագրիչները, իբրև այդպիսին նշում են այն, որ այս մոդելը պարզապես պահանջում է գնահատել իրավունքների և հանրային շահի միջև հակասությունը, այդպիսիք դիտարկել իբրև հավասարաբեթ երևույթներ և լուծել հակասությունը՝ հոգուտ ավելի ուժեղ արժեքի¹⁶: Այլ կերպ՝ պետք է կշռել իրավունքը բավարարելու անհրաժեշտությունն այն սահմանափակելու պատճառների հետ՝ նպատակ ունենալով առաջ տանել լավագույն շահը:

Այս տեսության հակառակորդները պնդում են, որ առաջնային նշանակություն պետք է տալ իրավունքների պաշտպանությանը: Ընդունելով իրավունքների ոչ բացարձակ բնույթը՝ այնուամենայնիվ որոշ տեսաբաններ գտնում են, որ իրավունքը պետք է դիտարկվի իբրև առաջնահերթ գործոն, որի սահմանափակման իրավաչափությունը պետք է բխի բացառապես ծանրակշիռ հանգամանքների առկայությունից, ընդ որում նշված հանգամանքները պետք է առավել կարևոր նշանակություն ունենան, քան գուտ հավասարակշռման մոդելի պարագայում: Այս առնչությամբ գուգահեռներ են անցկացվում ընդհանուր իրավունքի համակարգում նախորդ նախադեպից շեղվելու իրավաչափության՝ այլ որոշում կայացնելու ծանրակշիռ փաստարկների առկայության պայմանի հետ¹⁷:

Վերոշարադրյալ ներպետական կարգավորումներից, մասնավորապես համաչափության սկզբունքի սահմանադրական բնորոշումից բխում է, որ գերնպատակ դիտվում է անձի իրավունքի պաշտպանության շահը, որի սահմանափակումը կարող է արդարացված լինել գերակա հանրային շահի առկայությամբ: Նախագծի կարգավորումներից բխում է, որ անձի սահմանադրական իրավունքների սահմանափակմանն ուղղված ապացուցողական գործողությունների նկատմամբ դատական վերահսկողության առարկան ներառում է դրանց համաչափության ստուգումը: Դա ենթադրում է, որ ներպետական օրենսդրական կարգավորումներն արդեն իսկ նախատեսում են համապատասխան սահմանադրական իրավունքների համաչափ սահմանափակման պահանջ, սակայն, թե որքանով է հնարավոր յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ապահովել հանրային և մասնավոր շահերի հավասարակշ-

¹⁵ Sté u Joseph Raz, *Practical Reason and Norms* (1975) 36, մեջբերումն ըստ՝ Denise Meyerson, նշվ. աշխ.:

¹⁶ Sté u Denise Meyerson, նշվ. աշխ.:

¹⁷ Sté u Stephen R Pery, 'Judicial Obligation, Precedent and the Common Law' (1987) 7 *Oxford Journal of Legal Studies*, մեջբերումն ըստ՝ Denise Meyerson, նշվ. աշխ.:

ռումբ, մեծապես կախված է իրավակիրառից: Ինչ վերաբերում է օրենսդրական այն կարգավորումներին, որոնք ուղղակիորեն չեն արտացոլում համաչափության սկզբունքը, այլ ենթադրում են հանրային և մասնավոր շահերի հավասարակշռմամբ որոշակի վարույթային լուծումներ, ապա այս դեպքում օրենսդիրը նախ խնդիր ունի որոշելու մրցակցող հանրային ու մասնավոր շահերը և ապահովելու դրանց հավասարակշռությունը: Այս դեպքում ևս, կարծում ենք, օրենսդիրը պետք է հիմնվի (Նախագծի կարգավորումներից բխում է, որ հիմնվում է) մասնավոր շահի առաջնահերթ ապահովման գաղափարի վրա: Մեր կարծիքով, այս շահերի հավասարակշռման խնդրի ծագումը ինքնին պայմանավորված է հենց անձի իրավունքների պաշտպանության առաջնահերթության գաղափարով: Պարզապես, հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգահեռ երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակով և միջազգային գործոններով պայմանավորված՝ բովանդակային փոփոխության է ենթարկում նաև մարդու իրավունքների պաշտպանությունը, և այն հանրային շահի հետ նորովի հավասարակշռելու անհրաժեշտություն է ծագում՝ կանխելու համար նաև հանրային շահի գոյությունն անտեսելու հակառակ ծայրահեղությունը:

Ամփոփելով կարող ենք եզրահանգել, որ հանրային և մասնավոր շահի հավասարակշռման գաղափարը պետք է ուղենիշային լինի թե՛ օրենսդրական կարգավորումներ սահմանելու և թե՛ գործնականում այդպիսիք իրացնելու տեսանկյունից: Այս գաղափարն իրացվում է համաչափության սահմանադրական սկզբունքի ձևով: Ընդ որում, եթե համաչափության սկզբունքի միջոցով հանրային և մասնավոր շահի հավասարակշռման գաղափարի դրսևորումն ակնհայտ է առանձին իրավունքների սահմանափակման հատուկ կարգավորումներում, ապա օրենսդրական որոշ կարգավորումներ, լինելով նշված խնդրի լուծման օրինակներ, այդուհանդերձ ուղղակիորեն չեն արտացոլում այն:

Բանալի բառեր – հանրային շահ, մասնավոր շահ, համաչափության սկզբունք, շահերի հավասարակշռում, անհրաժեշտություն, համարժեքություն, իրավունքի սահմանափակում

ГАГИК КАЗИНЯН – Реализация конституционной идеи баланса публичных и частных интересов в контексте положений проекта нового Уголовно-процессуального кодекса РА. – Закрепление принципа соразмерности во внутреннем законодательстве и его практическое применение конституционными судами и судами общей юрисдикции в качестве процедуры обеспечения прав человека типично для стран общего и континентального права. Этот принцип отражён во внутреннем законодательстве на уровне Конституции РА, а конкретные положения, направленные на уравнивание публичных и частных интересов, предусмотрены в уголовно-процессуальном законодательстве. В статье выявлены существующие теоретические подходы к принципу соразмерности, а также международно-правовые требования, в свете которых

проанализированы соответствующие положения нового Уголовно-процессуального кодекса РА.

Ключевые слова: *общественный интерес, частный интерес, принцип соразмерности, баланс интересов, необходимость, разумность, ограничение права*

GAGIK GHAZNIYAN – *Realization of the Constitutional Idea of Balance of Public and Private Interests in the Context of the Provisions of the Draft New Code of Criminal Procedure of the RA.* – The enshrinement of the principle of proportionality in domestic law and its practical application by the constitutional courts and courts of general jurisdiction, as a procedure for ensuring respect for human rights by the state - is typical for both of the countries of common and continental law. This principle is reflected in the domestic legislation at the level of the RA Constitution, and the specific regulations aimed at balancing public and private interests have been included in the criminal procedural regulations. The article highlights the existing theoretical approaches to the principle of proportionality, international legal requirements, in the light of which the relevant solutions of the Draft new Code of Criminal Procedure of the RA Criminal Procedure Code were analyzed.

Key words: *public interest, private interest, principle of proportionality, balance of interests, necessity, reasonableness, restriction of right*

Ներկայացվել է՝ 14.09.2020,
Գրախոսվել է՝ 24.12.2020,
Ընդունվել է տպագրության՝ 30.09.2020